



ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

31.07.2018թ. | Ժամը 17:00-19:00 | ՀՀ կառավարություն

Մասնակիցներ՝ Բազմաշահառու խմբի անդամներ

Նախագահող՝	Արարատ Միրզոյան	Առաջին փոխվարչապետ
	Իրինա Ղափլանյան	Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
	Վարդան Գևորգյան	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Կարեն Իսախանյան	Տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն
	Պերճ Խաչատրյան	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ
	Վահե Վարդանյան	«Գեոմայինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
	Արթուր Համբարձումյան	«Հասարակական ծայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Արամ Օսիկյան	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն

(այլընտրանքային անդամ)

Անդրանիկ Աղաբալյան

«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

Լիլիա Շուշանյան

քարտուղարության ղեկավար

Լուսինե Թովմասյան

քարտուղարության փորձագետ

Հյուրեր՝

Զարուհի Մաթևոսյան

փոխվարչապետի խորհրդական

Մարիամ Գալստյան

Արդարադատության նախարարություն

Վիգեն Ավետիսյան

Բնապահպանության նախարարություն

Նարինե Թադևոսյան

Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում

Արտաշես Դավթյան

Հայաստանում բրիտանական դեսպանատուն

Ալեն Ամիրխանյան

Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)

Հովաննես Մարգարյանց

Հայաստանում GIZ-ի գրասենյակ

Անկախ ադմինիստրատոր՝

Վահագն Մարուխյան

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Անժելա Հարությունյան

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Լևոն Գևորգյան

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Կամո Կարապետյան

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Մարիկա Հարությունյան

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Դավիթ Անանյան

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Սուրեն Քրմոյան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ինգա Զարաֆյան

«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ

Դավիթ Թադևոսյան

«Թեդուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝ Լուսինե Թովմասյան

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի բացում, ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում, ԱՃԹՆ-ի զեկույցի հրապարակման վերջնաժամկետի երկարացման վերաբերյալ ԱՃԹՆ-ի խորհրդի որոշման ներկայացում

Ա.Միրզոյանը, որպես ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահը և նիստը նախագահող, ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց բազմաշահառու խմբի նոր անդամներին՝ ԲՇԽ-ի կառավարության խմբակցությունը ներկայացնող Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանին, Արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին, Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին՝ որպես այլընտրանքային անդամ, ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունների խմբակցության այլընտրանքային անդամներ «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Օսիկյանին, Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Անդրանիկ Աղաբալյանին, «Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Դավիթ Թադևոսյանին և «Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Մանվել Եղիազարյանին: Բազմաշահառու խմբի կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2018թ. հուլիսի 16-ի N 960-Ա որոշմամբ: **Շեշտվեց**, որ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը պետք է ընտրի և ներկայացնի խմբի 5-րդ անդամի թեկնածությունը:

Հայտարարվեց, որ ի պատասխան ԲՇԽ-ի կողմից ԱՃԹՆ-ի խորհուրդ ներկայացված՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակման ժամկետի հետաձգման հայցի՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը ուղարկել է ԱՃԹՆ-ի խորհրդի որոշումը զեկույցի հրապարակումը մինչև 2019 թվականի մարտի 9-ը հետաձգելու որոշման մասին: Այնուամենայնիվ, ԲՇԽ-ն **որոշում է կայացրել** Հայաստանի առաջին զեկույցը հրապարակել մինչև 2018 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները:

Քննարկված հարցերը

1. ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների հաստատում

Ներկայացվեց, որ ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները կազմվել և

շրջանառվել են ԲՇԽ-ի անդամների միջև, որոնց վերաբերյալ ԲՇԽ-ի անդամները կարծիքներ չեն ներկայացրել: Հակիրճ ներկայացվեցին հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները՝ մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածներում ընդունվել են ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների ներկայացման և ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող տեղեկատվության հրապարակման գործընթացները կարգավորող ՀՀ օրենքները և ՀՀ կառավարության որոշումը, սկսվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի և հաշվետվությունները առցանց ներկայացնելու հարթակի մշակման աշխատանքները, իրականացվել են աշխատանքներ գործընկեր դոնոր կազմակերպությունների հետ, իրականացվել են հանդիպումներ հանքարդյունահանող կազմակերպությունների հետ, դասընթացներ պետական մարմինների պատասխանատուների, համայնքների ներկայացուցիչների և լրագրողների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, համաձայն ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի որոշման՝ կազմվել, հաստատվել և հրապարակվել է ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվությունը, իրականացվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով սահմանված այլ միջոցառումներ: Տեղեկացվեց նաև, որ վճարվել է ԱՃԹՆ-ի անդամավճարը:

Բազմաշահառու խումբը **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները:

2. ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատում

Տեղեկացվեց, որ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է ՀՀ ԱՃԹՆ-ի հանրային հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի լրամշակված տարբերակը, որը շրջանառվել է ԲՇԽ-ի անդամների միջև:

Առաջարկություն ներկայացվեց, որ ԲՇԽ-ի անդամների կողմից նախքան ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը հնարավորության դեպքում այն տրամադրվի ԲՇԽ-ի անդամներին և ԱՃԹՆ-ի քարտուղարությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ստանալ դրա տարածման համար ԲՇԽ-ի համաձայնությունը: Առարկություն ներկայացվեց, որ որոշ դեպքերում դա հնարավոր չի լինի, հատկապես տեղեկատվության բանավոր տրամադրման դեպքերում: Այնուամենայնիվ, **խորհուրդ տրվեց**, որ ԱՃԹՆ-ի գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելիս անհրաժեշտ է խուսափել ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ կեղծ, ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական, ինչպես նաև տարամեկնաբանության առիթ տվող տեղեկատվության տարածումից:

Բազմաշահառու խումբը **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի հանրային հաղորդակցության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը առանց ներկայացված առաջարկի:

3. Անկախ ադմինիստրատորի ներկայացում, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի տեղեկությունների հավաքագրման ընթացքի ներկայացում

Ներկայացվեց, որ ՀԲ-ի՝ Աջացություն Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը դրամաշնորհային ծրագրի շրջանակում անցկացած մրցույթի արդյունքում ԲՇԽ-ի խմբակցությունների ներկայացուցիչներից կազմված գնահատող հանձնաժողովի կողմից ընտրվել, ապա ԲՇԽ-ի կողմից էլեկտրոնային եղանակով հաստատվել է աուդիտորական կազմակերպությունը (այսուհետ՝ անկախ ադմինիստրատոր): Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը կազմելու է «Էրնսթ Ընդ Յանգ» աուդիտորական ընկերությունը: ԲՇԽ-ին ներկայացան նիստին ներկա և զեկույցի կազմման աշխատանքների պատասխանատու «Էրնսթ Ընդ Յանգ» ընկերության ներկայացուցիչները: Տեղեկացվեց, որ ընկերության հետ կնքվել է պայմանագիր և ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման աշխատանքները արդեն սկսվել են: Զեկույցը կկազմվի և կներկայացվի համաձայն տեխնիկական առաջադրանքով սահմանված վերջնաժամկետների: Անկախ ադմինիստրատորի ներկայացուցիչները հայտնեցին, որ արդեն սկսվել է հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգի միջոցով հրապարակային հաշվետվությունների ներկայացման գործընթացը: Կազմվել և հրապարակվել է հաշվետվությունների լրացման և ներկայացման գործընթացի վերաբերյալ ուղեցույց: Առաջարկներ են ներկայացվել առցանց համակարգի տեխնիկական թերությունների վերաբերյալ, որոնք ընթացքում ճշտվում են: Կապ է պահպանվում հաշվետվություն ներկայացնող ընկերությունների և պետական մարմինների հետ՝ համակարգում գրանցման և հաշվետվությունների լրացման հետ առնչվող հարցերին պատասխանելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով: Մշակվում են շահագրգիռ մարմիններից տեղեկատվության հարցման հարցաշարերը, որով պետական մարմինները ներկայացնելու են ոչ ֆինանսական տեղեկատվություն՝ համաձայն կայացած հանդիպումների ժամանակ ձեռքբերված համաձայնությունների: Ներկայումս աշխատանքներ են կատարվում մեկնարկային հաշվետվության կազմման ուղղությամբ:

4. Իրական սեփականատերերի բացահայտման օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում

Ներկայացվեց, որ իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբը քարտուղարության հետ կազմակերպել է մի շարք աշխատանքային հանդիպումներ և, համաձայն ժամանակացույցի, մշակվել է իրական սեփականատերերի բացահայտման

օրենքների նախագծերի փաթեթ: Փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ ընդերքի օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում: Արդարադատության նախարարության և էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչները ներկայացրին օրենքների նախագծերում սահմանված դրույթները: Նշվեց, որ իրական սեփականատերերի գրանցումն իրականացվելու է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից: Իրական սեփականատիրոջ հասկացությունը համապատասխանում է ԲՇԽ-ի կողմից հաստատված և իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզում հրապարակված հասկացությանը. իրական սեփականատերը ֆիզիկական անձ է, ով.

ա. առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, փայերին, բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության 10 տոկոս հանրագումարին.

բ. վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի և (կամ) մեկ ծայնից ավելի ծայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի/բաժնեմասերի միջոցով.

գ. էական տնտեսական օգուտ է ստանում իրաբանական անձից, որը կազմում է այդ իրավաբանական անձի տարեկան շահութաբաժինների առնվազն 15 տոկոսը.

դ. իրավասու է նշանակել կամ ազատել իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց.

ե. իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ իրավունք ունի ազդել իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկել կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշել իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով (ներառյալ՝ գործարքներ կնքելու, հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի, օպցիոնի

պայմանագրի, բաժնետոմսերի/բաժնեմասերի փոխարկող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով):

Քաղաքական ազդեցություն ունեցող անձը իրավաբանական անձին տիրապետելու կամ վերահսկելու դեպքում համարվում է իրական սեփականատեր՝ անկախ հսկողության մակարդակից և մասնակցության չափից:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը նույնականացվելու է՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց, վերջիններիս ընտանիքի անդամների շրջանակի հետ: Համակարգը էլեկտրոնային կարգով կհամակցվի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի՝ հետազայում կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տեղեկատվական բազային, որի միջոցով հաճնաժողովը կկարողանա ստուգել տեղեկատվությունը: Սահմանվել է նաև փոխկապակցված անձանց շրջանակը:

Իրավաբանական անձն ամեն տարի մինչև փետրվարի 20-ը ներկայացնելու է հայտարարագիր, իսկ ցանկացած փոփոխության դեպքում 40-օրյա ժամկետում պետական ռեգիստր է ներկայացնելու փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն: Տվյալների ստուգման նպատակով իրավաբանական անձը ներկայացնելու է նաև իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված (այդ թվում՝ օտարերկրյա) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված:

ՀՀ ընդերքի օրենսգրքում առաջարկվում է սահմանել նոր՝ ընդերքօգտագործման իրավունքի կասեցում հասկացությունը, եթե իրավաբանական անձը սահմանված կարգով չի ներկայացրել իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագիրը և չի վերացրել զգուշացման հիմքերը: Ընդհանուր առմամբ, պատժամիջոցների առումով գործելու է զգուշացում, կասեցում, այնուհետև դադարեցում սկզբունքը:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դիմում ներկայացնելիս նույնպես իրավաբանական անձը պետք է բացահայտի իր իրական սեփականատերերին: Նշվեց, որ Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի համաձայն, այս հատվածն ընդգրկելու վերաբերյալ պետք է ուսումնասիրություն և քննարկում իրականացվեր 2018 թվականի վերջին, սակայն որոշվեց արդեն իսկ այս օրենսդրական փաթեթով ընդլայնել հայտարարագիր ներկայացնողների

շրջանակը: Ավելին, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն ստանալու համար նույնպես պարտադիր պահանջ կսահմանվի իրական սեփականատերերին հայտարարագրելը, որը չկատարելը կլինի մերժման հիմք: Օրենսգրքում առաջին անգամ այսպիսով կսահմանվեն համաձայնության մերժման հիմքեր:

Բոլոր տեսակի թույլտվություններից հրաժարվելու դիմում ներկայացնելիս իրական սեփականատերերի հայտարարագրման մասին տեղեկանքի ներկայացումը նույնպես պարտադիր պահանջ կսահմանվի:

Տվյալները լինելու են հրապարակային՝ բացառությամբ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ օրենսդրությամբ գաղտնի համարվող տեղեկատվության: Հայտարարագրելը ներկայացվելու են մինչև 2019 թվականի վերջ:

Բազմաշահառու խումբը **հաստատեց** օրենքների նախագծերի փաթեթը: Հայտարարվեց, որ, սահմանված կարգով փաթեթը շրջանառվելու է և ներկայացվելու է կառավարությանը: Ստացված առաջարկությունների և դիտողությունների արդյունքում նախագծերում կարող են կատարվել որոշակի փոփոխություններ, որոնք սակայն չեն կարող էապես փոփոխել ԲՇԽ-ի կողմից ընդունված որոշումները: Վերջնական տարբերակը կշրջանառվի ԲՇԽ-ի անդամներ միջև:

5. Այլ հարցերի քննարկում

- **Հանքարդյունահանող ընկերությունների համար աուդիտի պարտադիր պահանջի սահմանման քննարկում**

Հարցի պատասխանատուն ներկայացրեց գործող օրենսդրությունը և շրջանառվող նոր նախագծերով նախատեսվող փոփոխությունները: Մինչ 2014 թվականը, եթե կազմակերպությունը իրացման շրջանառությամբ կամ հասույթի մեծությամբ կամ ակտիվների մեծությամբ գերազանցում էր 1 մլդ դրամի շեմը, համարվում էր խոշոր կազմակերպություն և ենթակա էր պարտադիր աուդիտի: 2014թ. հուլիսի 1-ից հանվել է պարտադիր աուդիտի պահանջը: Սակայն կան կազմակերպությունների որոշակի խմբեր, որոնք ենթակա են պարտադիր աուդիտի: Միաժամանակ շրջանառվում է հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթ, որով առաջարկվում է վերականգնել պարտադիր աուդիտի պահանջը՝ ըստ որոշակի չափորոշիչների: Մասնավորապես, պարտադիր աուդիտի ենթակա են լինելու հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունները և ֆինանսավարկային հատվածը ներկայացնող կազմակերպությունները: Խոշոր և

միջին կազմակերպությունների որոշակի շրջանակ նույնպես ենթակա է լինելու պարտադիր աուդիտի: Առաջարկվող չափաորոշիչներն են՝ երբ ակտիվների արժեքը 10 մլրդ դրամ է և ավելի, հասույթը 20 մլրդ դրամ է և ավելի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակը 250 աշխատող է և ավելի: Այս երեք ցուցանիշներից առնվազն երկուսին բավարարելու դեպքում կազմակերպությունը որակվում է որպես խոշոր և ենթակա է աուդիտի: Կան նաև միջին խմբին առնչվող չափորոշիչներ: Նախագծերում ոլորտային առանձնահատկություններ նախատեսված չեն: Առաջարկվեց նախագծերում չմտցնել հատուկ կարգավորումներ, որոնք առնչվում են հանքարդյունաբերությանը: Կարծիք ներկայացվեց, որ բոլոր ակտիվ արդյունահանմամբ զբաղվող ընկերությունները ենթարկվում են աուդիտի, ինչպես նաև դրանք բավարարելու են ներկայացված չափորոշիչներին:

Նշվեց, որ ստանդարտը պահանջում է նաև պետական եկամուտների աուդիտ: Ներկայումս քննարկման փուլում է Հաշվեքննիչ պալատի կողմից պետական եկամուտները աուդիտի ենթարկելու հարցը, և ստանդարտի պահանջը կարող է բավարարվել այս ապագա կարգավորումներով:

Որոշվեց՝ ներկայումս հանքարդյունահանողների համար չսահմանել պարտադիր աուդիտի պահանջ, քանի որ ենթադրվում է, որ գործող հանքարդյունահանող կազմակերպությունները բավարարում են պարտադիր աուդիտի համար սահմանված չափորոշիչներին: Առաջարկվեց նաև սպասել վերոնշյալ օրենսդրական փաթեթի ընդունմանը և հասկանալ, թե դրա արդյունքում հանքարդյունահանող կազմակերպություններից որոնք կլինեն պարտադիր աուդիտի ենթակա:

- **ԱՃԹՆ-ի տվյալների՝ ծրագրերի մակարդակով (project level reporting) ներկայացման հնարավորությունների քննարկում**

Ներկայացվեց, որ 2019 թվականից ուժի մեջ է մտնում ԱՃԹՆ-ի պարտադիր պահանջ՝ զեկույցում ներկայացվող հարկերի և վճարների հոսքերը ներկայացնել ոչ թե կորպորատիվ, այլ ծրագրի մակարդակով, որը ավելի հասցեական տվյալներ ունենալու հնարավորություն կընձեռի: Սակայն կան մի շարք բարդություններ, որոնք, համաձայն ՀՀ ոլորտային օրենսդրության, մի շարք հարկատեսակների ու վճարների համար անհնար են դարձնում ծրագրի մակարդակով տվյալների ներկայացումը: Կազմակերպությունների մի շարք ծախսումներ անհնար է վերագրել որևէ ծրագրի կամ թույլտվության, օրինակ, կազմակերպության ղեկավար կազմի աշխատավարձի վճարումը և մի շարք այլ ծախսեր:

Որոշվեց նաև, որ արդեն 2018 թվականի զեկույցի համար հաստատված հաշվետվություններում այն բոլոր ֆինանսական հոսքերը, որոնք ներկայումս

հնարավոր է ներկայացնել արդյունահանման թույլտվությունների մակարդակով, ներկայացվելու են հենց այդ մակարդակում:

Հաջորդ տարիների համար առաջարկվեց գնալ աստիճանական տարբերակով՝ անկախ ադմինիստրատորից առաջին զեկույցում ստանալ որոշակի վերլուծություն և առաջարկներ հարցի վերաբերյալ, որի հիմքով կիրականացվեն աշխատանքային քննարկումներ պարզելու՝ ապագայում լրացուցիչ որ հոսքերը կարող են ներկայացվել ծրագրերի մակարդակով: Առաջարկությունը **ընդունվեց** բազմաշահառու խումբի կողմից:

Բազմաշահառու խումբը նաև **որոշեց**, որ ներկայումս որպես ծրագիր կդիտարկվի ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը:

- **Օրենսդրական վերլուծության ընթացիկ աշխատանքները, ինչպես նաև պատասխանատու հանքարդյունաբերության ճանապարհային քարտեզի մշակման գործընթացի պլանավորում**

Տեղեկացվեց, որ Օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության նախագծի վերաբերյալ 15 շահագրգիռ գերատեսչությունների և ԲՇԽ-ի անդամների բավական ծավալուն դիտարկումները տրամադրվել են ՀԱՀ ՊՀԿ-ին և լրամշակված նախագիծը կտրամադրվի ԲՇԽ-ին մինչև օգոստոսի 20-ը:

Առաջարկվեց վերանայել ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության խնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի կազմը, քանի որ այնտեղ ընդգրկված չեն բոլոր շահագրգիռ անձինք և մասնագետները և խումբը արդյունավետ չի գործում: Ոլորտում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք ենթակա են հրատապ քննարկման: **Որոշվեց**, որ մեկշաբաթյա ժամկետում ԲՇԽ-ի խմբակցությունները պետք է ներկայացնեն պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի անդամների թեկնածուներ և խումբը Բնապահպանության նախարարության ԲՇԽ-ի անդամի գլխավորությամբ կսկսի աշխատանքները Օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության լրամշակված նախագծի ներկայացումից հետո: